

Միջին խնդիր

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Տրված է N հատ բնական թվերի հաջորդականություն: Յուրաքանչյուր քայլում թույլատրվում է ընտրել որևէ երկու հարևան թվեր և դրանք փոխարինել իրենց կիսագումարի ամբողջ մասով: $N-1$ քայլ կատարելուց հետո կմնա մեկ թիվ: Պետք է գրել ծրագիր, պարզելու համար վերջում մնացած թվի առավելագույն հնարավոր արժեքը:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է N -ը ($1 \leq N \leq 200$): Երկրորդ տողում տրված են իրարից մեկական բացատանիշով անջատված N բնական թվեր, որոնք չեն գերազանցում 10^9 -ը:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ: Մեծագույն թիվը, որ հնարավոր է ստանալ նկարագրված գործողությունը $N-1$ անգամ կատարելուց հետո:

Օրինակ

Մուտք	Ելք
4 2 5 4 7	5

Բացատրություն

5 կարելի է ստանալ, օրինակ, եթե նկարագրված գործողությունը կիրառենք հերթով՝ սկզբում 2 և 5 թվերի վրա, կստանանք 3, հետո այդ 3-ի և 4-ի վրա, կրկին կունենանք 3, և վերջում 3 և 7 թվերից կստանանք 5:

Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 0. Օրինակը (0 միավոր)
- Ենթախնդիր 1. Հաջորդականությունը կազմված է միայն 1-երից և 2-ներից (6 միավոր)
- Ենթախնդիր 2. $N < 10$ (30 միավոր)
- Ենթախնդիր 3. Լրացուցիչ սահմանափակումներ չկան (64 միավոր):